Անվտանգություն եւ առաջընթաց

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՀՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀՀԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ՄԱՐՏԻ 2017Թ.
№ 08 (426)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Նախընտրական ուղերձ

Ես պատրաստ եմ սպանձնելու արարմանն ուղղված պատասխանատվության իմ մասը

Հարգելի՛ հայրենակիցներ
Մենք բոլորս ունենք պարզ, մարդկային ցանկություններ՝ աշխատանքով ստեղծելու բարեկեցություն մեր ընտանիքներում, կրթելու մեր զավակներին, վայելելու արժանապատիվ ծերություն՝ մեր թոռների շրջապատում:
Մենք կոչված ենք նաեւ արարելու հանուն մեր հայրենիքի, քանզի միայն հայրենիքում մարդ կարող է իրեն իսկապես ամուր զգալ:
Ես չեմ հավակնում լուծել օրվա բոլոր խնդիրները, սակայն լիահույս եւ վստահ եմ, որ այսօր մեր յուրաքանչյուր հաջողված քայլ, յուրաքանչյուր լուծված խնդիր թեթեւացնելու է հետագա սերունդների բեռը: Ելնելով կենսափորձից՝ համոզված եմ, որ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կատարել իրատեսական եւ ժամանակի առաջնահերթությամբ պայմանավորված քայլեր:
Ես պատրաստ եմ ստանձնելու արարմանն ուղղված պատասխանատվության իմ մասը:
Ապրե՛լ եմ ձեր մեջ, ապրելո՛ւ եմ ձեր մեջ:

ՄՈՒՐԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱԺ պատգամավորի թեկնածու

ՍՅՈՒՆՅԱՑ

Մուրազ Գրիգորյան. ծնվել է 1958թ. ՀՀ Սյունիքի մարզի Կապանի շրջանի Նորաշենիկ գյուղում:

1966թ. ընդունվել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոց, 1974թ. տեղափոխվել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցի մաթեմատիկական թեքումով դասարան, որն էլ ավարտել է 1976 թվականին:

1976-1981թթ. սովորել եւ ավարտել է Երեւանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետը եւ ստացել ֆիզիկոսի որակավորում:

1981-1990թթ. աշխատել է «Սպին» (կոնդենսատորների) գործարանում՝ ինժեներ-տեխնոլոգ, N 3 արտադրական տեղամասի պետ, գործարանի ընդհանուր հարցերով փոխտնօրեն: 1990-1993թթ. աշխատել է «Ազաթ» փոքր ձեռնարկությունում՝ տնօրեն: 1993-2005թթ. աշխատել է «Ճանապարհ» արտադրական կոոպերատիվում՝ տնտեսագետ, կոոպերատիվի նախագահ՝ 1995 թվականից: 2005-2008թթ. աշխատել է «Սոնսիլվ» ՍՊԸ-ում՝ տնօրեն: 2008 թվականից մինչեւ այժմ աշխատում է «Նեմալ» ՍՊԸ-ում՝ տնօրեն:

Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մեկ որդի, երեք թոռ:

- Ողջ կյանքս սովորել, աշխատել եւ ապրել եմ Սյունյաց աշխարհում: Ապրել եմ ժողովրդի մեջ, ժողովրդի հետ միաձուլվելով՝ դարձել նրա մի մասնիկը: Եղել եմ պարզ ու բաց ինձ հետ շփվողների համար եւ հասարակության առաջ, - ահա այսպես է բնութագրում իր անցած ճանապարհը Մուրազ Գրիգորյանը:

ՀՀԿ Նախընտրական ծրագրից

Հարգելի՛ հայրենակիցներ,

Դաշտում հունձ անող գյուղացուց մինչեւ բարձրաստիճան պաշտոնյա, գործարարից մինչեւ նեղ ոլորտային մասնագետ, առհասարակ՝ ցանկացած աշխատավոր մարդ, ցանկացած մարդ պետք է լինի մեծարված, գնահատված եւ մշտապես գտնվի պետության ուշադրության կենտրոնում, քանի որ նրանք բոլորն իրենցից ներկայացնում են մեկ միասնական եւ արժանապատիվ կերպար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ անկախ պաշտոնից, դիրքից, մասնագիտացումից եւ սոցիալական կարգավիճակից: Հենց այս մարդիկ՝ Հայաստանի քաղաքացիներն են մեր երազած ապագայի երաշխավորները՝ բանիմաց, ջանասեր, հպարտ եւ ապագային նայող, այսօր այդ ապագան իրենց տքնաջան աշխատանքով կերտող:

Մենք պատրաստ ենք աշխատելու յուրաքանչյուրի հետ, ով ցանկանում է քարը քարի վրա դնել՝ մեր ընդհանուր տունը շենացնելու համար:

Մենք հավատում ենք մեր ժողովրդին, հավատում ենք աշխատելու, սովորելու, նորն ընկալելու եւ կիրառելու նրա ունակությանն ու պատրաստակամությանը:

Մենք հենվելու ենք ամուր եւ ավանդական ընտանիքի արժեքների վրա: Այո՛, ընտանիքը դիտարկում ենք որպես ողջ հասարակության մանրակերտ եւ պետության առաջընթացի կարեւոր խթան: Եվ հենց ընտանիքին բնորոշ համերաշխությամբ էլ հետեւողականորեն լուծելու ենք մեր առջեւ ծառացած բոլոր խնդիրները:

Փաստ է, որ մենք այսօր ունենք խնդիրներ եւ դժվարություններ, բայց այն պատմական ճանապարհը, որը մենք անցել ենք, այն դժվարությունները եւ խոչընդոտները, որոնք մենք միասին հաղթահարել ենք, պարզապես վերահիմաստավորելու դեպքում բավարար են, որպեսզի գիտակցենք, որ այսօրվա խնդիրները ոչ թե անհաղթահարելի են, այլ հե՛նց հաղթահարելի են: Եկե՛ք լինենք լավատես, լցվե՛նք ամուր հավատով եւ դժվարությամբ ձեռք բերած մեր պետությունն անվտանգ պահելով, առաջ ընթանալով՝ դարձնենք այն մեր երազած ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Հարցազրույց օրվա թեմայով

ՄՈՒՐԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ.
«Կապարենք միայն գիտակցված ընտրություն՝ հանուն մեր երկրի անվտանգության եւ առաջընթացի»

Հարցազրույց ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու Մուրազ Գրիգորյանի հետ

ՀՀԿ-ն թիվ 12 ընտրատարածքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու է առաջադրել նաեւ Մուրազ Գրիգորյանին:

Կապանի տարածաշրջանում բարեհամբավ գերդաստանի զավակ է, մարզի եւ հատկապես Կապանի գործարար աշխարհում հայտնի անձնավորություն:

Մինչեւ հիմա, սակայն, քաղաքական գործունեությամբ չի զբաղվել եւ չի կարեւորել իր իսկ կատարածը հանրությանը ներկայացնելու գործելակերպը:

Այդ պատճառով էլ հարկավոր ենք համարում նախեւառաջ նրան ներկայացնելը, նրա կատարածը համառոտ ցուցանելը:

Կարեւոր է նաեւ, թե երկրի օրենսդիր մարմնի անդամի մանդատին հավակնող Մուրազ Գորիգորյանն ինչպես է պատկերացնում Ազգային ժողովի դերը մեր պետության կյանքում՝ ՀՀ նորացված սահմանադրության պայմաններում, ինչպես է պատրաստվում իրականացնել (ընտրվելու դեպքում) պատգամավորի լիազորությունները, որքանով է քաջատեղյակ Հայաստանի Հանրապետության, նաեւ Սյունիքի մարզի ու հատկապես Կապանի տարածաշրջանի հիմնախնդիրներին:

– Պարո՛ն Գրիգորյան, Դուք գործարար մարդու համբավ ունեք: Փորձենք ընդհանրացնել՝ ի՞նչ դրսեւորումներ է ունեցել Ձեր գործարարությունը, որո՞նք են տարիների առավել ուշագրավ ձեռնարկումները կամ աշխատանքներն այդ տեսակետից:

– Որպես գործարարության առավել կարեւոր դրսեւորում համարում եմ տարաբնույթ արտադրությունների եւ ձեռնարկությունների կազմակերպումը, կայուն աշխատատեղերի ստեղծումը, ստեղծված կոլեկտիվներում միջանձնային ճիշտ փոխհարաբերությունների ձեւավորումը, ինչը հնարավորություն է ընձեռել լուծել ամենաբարդ արտադրական խնդիրները:

– Եթե ոչ Դուք, ապա ուրիշ ո՞վ կարող է ասել՝ դյուրի՞ն է մեր մարզում ձեռներեց լինել, ի՞նչ խոչընդոտներ կան փոքր եւ միջին ձեռներեցության ոլորտում:

– Ձեռներեց լինելը եւ արդյունք ստեղծելը ճիգ է պահանջում աշխարհի ցանկացած անկյունում: Մարզի տարածքում ձեռներեցության յուրահատկությունը պայմանավորված է օբյեկտիվ իրականությամբ՝ մայրաքաղաքից հեռու գտնվելու հանգամանքով եւ ավտոմոբիլային տրանսպորտից լրացուցիչ կախվածությամբ, ինչը ծառայությունների եւ արդյունք ստեղծելու առումով բերում է ինքնարժեքի ավելացման եւ մրցունակության որոշակի նվազեցման: Սակայն նշվածը դատավճիռ չէ, եւ աշխատանքի գիտական կազմակերպման պարագայում հնարավոր է շրջանցել այդ խոչընդոտները:

– Արդեն ասացինք, որ թիվ 12 ընտրական տարածքում ՀՀԿ-ի առաջադրած ութ թեկնածուից մեկը Դուք եք:

Ի դեպ, մարզկենտրոնի մի քանի հարյուր Հանրապետականից հենց Դուք եք արժանացել ՀՀԿ-ի թեկնածու լինելու պատվին:

Ինչո՞վ եք դա բացատրում, ինչո՞ւ հենց Ձեր թեկնածության վրա կանգ առավ ՀՀԿ-ն:

Քվեարկեմ Մուրազ Գրիգորյանի օգտին

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կապան համայնքի ղեկավար

Նախ՝ ցանկանում եմ Մուրազ Գրիգորյանին բնութագրել իբրեւ Կապան քաղաքի բնակիչ:

Իր բնօրրանի օրինակելի քաղաքացին է, համայնքում բարի համբավ ունեցող, դրական առումով հայտնի, լավ ավանդույթներ կրող ընտանիքի զավակ, ինչը շատ եմ կարեւորում, քանի որ նման ընտանիքների առկայությունն է ձեւավորում համայնքի կոլորիտը, ապահովում Կապանին բնորոշ քաղաքային մշակույթը:

Նրան՝ որպես տնտեսվարողի, գնահատելիս կարեւորում եմ այն, որ Կապանի բնակչության համար երկար տարիներ կայուն աշխատատեղեր ապահովող գործատու է, հիմնադրած գործունեության մեջ հաջողություններ գրանցած գործարար: Եվ որպես Կապանում գործող տնտեսվարող՝ մշտապես գիտակցել է պատասխանատվությունը համայնքի հանդեպ, մասնակցել իր քաղաքի կյանքին եւ ներդրում ունեցել նրա խնդիրների լուծման մեջ:

Սակայն, դա արել է շատ համեստորեն, առանց իրեն գովազդելու եւ շնորհակալության ակնկալիքի: Ուստի, իր մարդկային արժանիքների մեջ պետք է առաջին հերթին առանձնացնեմ բացառիկ համեստությունը, որը հազվադեպ է մեր օրերում:

Կիրթ եւ պատասխանատվության մեծ զգացումով անհատ է, եւ, կարծում եմ, մեր տարածաշրջանը կարող է լրջորեն շահել, եթե ՀՀ օրենսդիր մարմնում ներկայացված լինի Մուրազ Գրիգորյան պատգամավորով: ■

ՀԱՄԼԵՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կապանի մեքենաշինական գործարանի տնօրեն

Մուրազ Գրիգորյանին առաջին անգամ ճանաչել եմ 1981թ. սեպտեմբերին Կապանի «Սպին» (կոնդենսատորների) գործարանում, որպես ինժեներ-տեխնոլոգ աշխատանքի ընդունվելու պահից, որտեղ գլխավոր ինժեներն եմ եղել:

Հենց առաջին օրերից կցվել է աշխատանքի, խորացել գործարանի տեխնիկական խնդիրների մեջ, առաջարկել մի շարք տեխնիկական փոփոխություններ, կատարել նորարարական աշխատանքներ, որը մեծ եկամուտ է բերել գործարանին: Կարճ ժամանակ հետո գործարանի ղեկավարությունը, տեսնելով ինժեների եւ վարչական աշխատողի ձիրքը, Մ.Գրիգորյանին նշանակել է նորաստեղծ թիվ 3 (Կավարտ) արտադրական տեղամասի պետ: Դեռ շինարարության մեջ գտնվող 8 աշխատող ունեցող արտադրական տեղամասից մեկ տարվա մեջ ստեղծել է 120 աշխատակից ունեցող երկու արտադրամասից կազմված երկհերթ աշխատող տեղամաս: Մ.Գրիգորյանի աշխատանքային ձիրքը երեւացել է նաեւ գործարանի ընդհանուր գծով փոխտնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին: Չնայած երիտասարդ տարիքին՝ կարողացել է համագործակցել ԽՍՀՄ տարածքում սփռված բազմաթիվ գործընկերների հետ, կազմակերպել առաքումը եւ նյութատեխնիկական մատակարարումը, որը մեծապես նպաստել է գործարանում կարճ ժամանակում երկու նոր տիպի կոնդենսատորի արտադրություն հիմնելուն: Ես այսօր նույնպես շփվում եմ Մ.Գրիգորյանի հետ, ով իմ բարեկամն է, եւ գիտեմ այդ մարդու գործնական ու մարդկային ունակությունների մասին, բայց դա թող ներկայի գնահատականը լինի:

Ես, նախանշելով Մ.Գրիգորյանի հենց առաջին աշխատանքային օրվանից սկսած ինը տարվա աշխատանքային գործունեությունը, ցանկացել եմ ցույց տալ, որ նա օժտված է ինժեներական տրամաբանությամբ, վարչական կառավարման ճկուն ձիրքով, խնդիրների ինքնատիպ լուծման յուրահատկությամբ, էքստրեմալ պայմաններում կողմնորոշվելու ունակությամբ: Մ.Գրիգորյանն այսօր եւս չի փոխել դեմքը, նույնն է մնացել դեպի աշխատանքը եւ հասարակությունը: ■

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ շինարարության գծով տնօրենի տեղակալ

Երկար տարիներ աշխատելով եւ առօրյա կյանքում շփվելով Մուրազ Գրիգորյանի հետ՝ հարկ եմ համարում շեշտել, որ նա իր կենսագործունեության ընթացքում եղել է սկզբունքային, մշտապես աշխատել նորովի եւ եռանդուն, համառությամբ հաղթահարել բոլոր դժվարություններն ու հասել նպատակին:

Նա բոլոր պրոբլեմների ու խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերել է համալիր, հիմնավորված ու կշռադատ-

Հարցազրույց օրվա թեմայով

– ժամանակներն ունեն իրենց առաջնահերթությունները եւ դրանց ընթացքն ապահովելու համար ընտրվում են չափորոշիչներ: Հնարավոր եմ համարում, որ իմ առաջադրումը պայմանավորված է առկա կենսափորձը ծառայեցնելու նշված առաջնահերթությունների ընթացքի ապահովմանը:

– Կապանում շրջանառվող առնվազն երկու ասեկոսե ոչ միայն Ձեզ են վերաբերում, այլեւ տեղավորվում են նախորդ հարցի տրամաբանության մեջ:

Իբր Կապանի քաղաքապետի վերջին ընտրությունից առաջ Ձեր եղբորը համայնքապետի տեղակալ նշանակելը վճռորոշ նշանակություն է ունեցել 2016-ի հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրության ժամանակ` ՀՀԿ-ի թեկնածուի հաղթանակն ապահովելու առումով:

Իբր հենց Ձեր գերդաստանի ներկայացուցիչն է լինելու Կապան խոշորացված համայնքի ղեկավարի իշխանական թեկնածուն, եթե, իհարկե, առաջիկայում տեղի ունենա Կապանի երբեմնի վարչական շրջանի մեջ մտնող բնակավայրերի միավորում մեկ համայնքի մեջ, եթե Դուք կարողանաք ապրիլի 2-ին վերստին վճռորոշ դեր խաղալ` ՀՀԿ-ի օգտին ձայներ բերելու առումով:

Ի՞նչ կասեք այդ խոսակցությունների առիթով:

– Կապանի համայնքապետի ընտրության վերաբերյալ Ձեր հարցին պատասխանեմ. մեր ընտանիքը մասնակցել է այդ ընտրությանն իր հնարավորություններով, ինչը բնավ պայմանավորված չէր իմ եղբոր` համայնքապետի տեղակալ նշանակվելու հանգամանքով: Հարցի երկրորդ մասի վերաբերյալ նշեմ, որ թե՛ թիմային աշխատանքում եւ թե՛ մարդկային փոխհարաբերություններում նախապայմաններով աշխատելը եւ առեւտուր անելը մեզ բնորոշ չեն, ինչը մենք ապացուցել ենք մեր ապրած կյանքով: Ապրիլի 2-ի վերաբերյալ կասեմ, որ առանց նախապայմանների մեր ամբողջ հնարավորություններով մասնակցելու ենք ընտրական գործընթացներին:

– ՀՀ գործող սահմանադրության եւ Ընտրական օրենսգրքի համաձայն` ԱԺ պատգամավորի թեկնածուն առանձին նախընտրական ծրագիր չի ներկայացնում, նախընտրական ծրագիր ներկայացնում է ընտրությանը մասնակցող քաղաքական ուժը:

Դուք, որպես թեկնածու, մասնակցե՞լ եք ՀՀԿ նախընտրական ծրագրի մշակմանը:

Եթե նույնիսկ չեք մասնակցել, ապա ենթադրում ենք, որ հանգամանորեն ծանոթացել եք ՀՀԿ նախընտրական ծրագրին:

Ծրագրի հատկապես ո՞ր բաժինն է Ձեզ սրտամոտ, ո՞ր մասի իրագործմանը Դուք կկարողանաք (ընտրվելու դեպքում) գործնական մասնակցություն ունենալ:

– ՀՀԿ նախընտրական ծրագրի մշակմանը չեմ մասնակցել, սակայն, բնականաբար, ծանոթացել եմ, եւ, չառանձնացնելով որեւէ դրույթ, կնշեմ, որ այն բխում է առկա իրողություններից եւ առաջարկվող լուծումների առումով իրատեսական է:

– Դուք առաջիկա ընտրություններին կմասնակցեք ՀՀԿ-ի դրոշի ներքո:

Կարո՞ղ եք շատ համառոտ բնութագրել քաղաքական այդ ուժին եւ իմաստավորել նրա կատարածը Հայաստանի 3-րդ հանրապետության 25-ամյա պատմության ընթացքում:

– Հայաստանի հանրապետական կուսակցությունը պահպանողական գաղափարախոսության կրողն է, ինչն անձամբ շատ կարեւորում եմ: Կարծում եմ` անժխտելի է ՀՀԿ-ի գերիշխող դերը երկրի կառավարման, պետական ինստիտուտների ձեւավորման, միջազգային կարեւորագույն կոմունիկացիաներից կտրվածության պայմաններում տնտեսության կազմակերպման գործում:

– Ապրիլի 2-ին կայանալիք ընտրություններին թիվ 12 ընտրատարածքում` միայն տարածքային ընտրացուցակներով, կմասնակցի մի քանի տասնյակ թեկնածու` ներկայացված 9 քաղաքական ուժի կողմից:

Ո՞ր կուսակցությունը կամ կուսակցության դաշինքը կլինի ՀՀԿ-ի մրցակիցը թիվ 12 ընտրատարածքում:

Ո՞ւմ եք համարում Ձեր գլխավոր մրցակիցն այդ ընտրատարածքում:

– Կուսակցությունների եւ դաշինքների մասով նշեմ, որ յուրաքանչյուրին համարում եմ ունակ քաղաքական միավոր եւ մրցակից: Սակայն այս մրցապայքարում հավատում եմ ՀՀԿ-ի հաղթանակին:

– Ընտրատարածքը, նաեւ Կապան մարզկենտրոնը (որտեղ բնակվում է Ձեր հավանական ընտրազանգվածի գերակշիռ մասը), բնականաբար, բազմաբեւեռ հասարակություն է իրենից ներկայացնում: Եվ հանրության ամեն մի խավ պատգամավորի թեկնածուի իր պատկերացումները, իր համակրանքն ու հակակրանքն ունի:

Ի՞նչ եք կարծում, հատկապես ո՞ր խավն է Ձեր սոցիալական-քաղաքական հենարանն առաջիկա ընտրություններում, ո՞վ է Ձեր ընտրողը:

– Բնականաբար քաղաքական հենարանը Հանրապետական կուսակցությունն է, իսկ սոցիալականը բազմաշերտ է, որտեղից էլ կլինեն իմ ընտրողները:

– Ուզենք-չուզենք, կա,

▶ 4

Բնութագրեր Մուրազ Գրիգորյանի մասին

ված մոտեցում, որից հետո կայացրել համապատասխան որոշում ու սկսել իրագործել:

Նման աշխատաոճի շնորհիվ նրա ղեկավարած շինարարական կազմակերպությունը, որպես գործընկեր, երկար տարիներ համագործակցել է մարզի խոշորագույն կազմակերպությունների հետ` իրականացնելով նաեւ ամենաբարդ կառույցների շինարարությունը:

Նա, մասնագիտությամբ լինելով ֆիզիկոս, կարողացել է իր պրպտուն ու ճկուն մտքի, անալիտիկ մտածողության, աշխատասիրության շնորհիվ դառնալ լավագույն շինարար մասնագետ, որը խոսում է նրա պոտենցիալ կարողությունների ու ունակությունների, ճանաչված եւ հեղինակություն վայելած ճանապարհաշինարար հոր` Լենդրոշ Գրիգորյանի հետնորդ լինելու մասին:

Մուրազ Գրիգորյանը, վարելով տարբեր պաշտոններ եւ երկար տարիներ լինելով բազմաճյուղ բիզնեսի ղեկավար, իր երկու եղբոր հետ, ոչ միայն ստեղծել են հարյուրավոր աշխատատեղեր, այլեւ կարողացել են համախմբել կուռ, բանիմաց կոլեկտիվներ, որոնց որոշ մասնագետ կադրեր իրենց աշխատանքն են շարունակում նաեւ այլ կազմակերպություններում:

Իսկ ինչ վերաբերում է Գրիգորյանի ընտանիքին, ապա հակիրճ կասեմ, նա ընտանիքը համարել է սրբություն ու իր կենսագործունեության աղբյուր:

Իմ համոզմամբ` Մ.Գրիգորյանն ԱԺ պատգամավոր ընտրվելու դեպքում, պայմանավորված իր մարդկային եւ գործնական որակներով, համագործակցելով տարածաշրջանի ղեկավարության հետ, կարող է վեր հանել տարածաշրջանային եւ հասարակությանը հուզող խնդիրներն ու վերլուծելով դրանք` ներկայացնել գործնական, իրատեսական առաջարկներ նշված հարցերն օրենսդրորեն լուծելու համար: ■

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ

Բուհը եւ պարտադիր ժամկետային զինծառայությունն ավարտելուց հետո պատիվ եմ ունեցել աշխատել Մուրազ Գրիգորյանի հետ եւ նրա ղեկավարությամբ: Ինձ համար նրան բնութագրելը ե՛ւ դժվար է, ե՛ւ հեշտ: Դժվար է, որովհետեւ մի քանի նախադասությունը բավարար չէ նրա մարդկային եւ աշխատանքային որակները բնութագրելու համար: Հեշտ է, քանզի վեց տարվա համատեղ աշխատանքի արդյունքում կարողացել եմ որոշակիորեն ճանաչել եւ հասկանալ Մուրազ Գրիգորյան մարդու, գործատուի եւ ղեկավարի տեսակը եւ ինչ էլ ասեմ, անկեղծ կլինի:

Առաջին հայացքից հեշտ չէ աշխատել Մուրազ Գրիգորյանի հետ, առավել եւս լինել նրա ենթական: Հեշտ չէ, որովհետեւ նա խիստ է, պահանջկոտ, հետեւողական: Եվ աշխատանքի ընթացքում հասկանում ես, որ այդ ամենը շղարշ չէ, այլ բնավորություն, մտածողություն, կենսակերպ, տեսակ: Հասկանում եւ տեսնում ես, որ Մուրազ Գրիգորյանը պահանջկոտ է առաջին հերթին ինքն իր հանդեպ, խիստ է իր հարազատների նկատմամբ, հետեւողական` ցանկացած, նույնիսկ ամենաբարդ խնդիրների լուծման ժամանակ: Հասկանում ես, որ նրա խստության տակ կա հոգատարություն, կա անկեղծ ցանկություն եւ ձգտում` նպաստելու յուրաքանչյուր աշխատակցի զարգացմանը: Այդպիսին է նա, նա հերիքում է բոլորին:

Վաղուց արդեն մեր հարաբերությունները աշխատանքային չեն, բայց գիտեմ, որ ցանկացած հարցով կարող եմ դիմել Մուրազ Գրիգորյանին եւ ստանալ նրա աջակցությունը, խորհուրդը, հորդորը, ինչու չէ, նաեւ խրատն ու կշտամբանքը:

Կարող եմ փաստել, որ իմ անհատականության ձեւավորման, աշխատանքային փոխհարաբերություններում դրսեւորման գործում Մուրազ Գրիգորյանին ճանաչելը եւ նրա հետ աշխատելը թողել են անջնջելի հետք:

Վստահ եմ` ցանկացած պաշտոնում, ցանկացած աշխատանքային իրավիճակում Մուրազ Գրիգորյանը պատվով կկատարի իր վրա դրված պարտականությունները: ■

ՌՈՒԲԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ (ՈՒԲԱԿ)

Նկարիչ

Մուրազ Գրիգորյան իմ հասակակցին ճանաչում եմ դպրոցական տարիքից` որպես կիրթ, լիդերի հատկանիշներով օժտված, իր խոսքի տեր անձնավորության:

Նրան ճանաչելու ողջ ժամանակահատվածում նկարչի իմ ընկալմամբ զգացել եմ վերջինիս կամեցողության շնորհը` տրված Արարչի կողմից:

Իմ համոզմամբ` Մուրազ տեսակն իր ներկայությամբ վստահություն է հաղորդում ցանկացած շրջապատի, լրացնում ներկապնակի ցանկացած պակասող գույն: Նա մեծ սրտի տեր է եւ կարող է իր բնույթով կամրջել նույնիսկ անհամատեղելիներին:

Հասարակության հոգսի կամավոր պատասխանատուն է: Մուրազ Գրիգորյանին կնկարեի տաք գույներով, ով ջերմություն է ճառագում այսօր մարդկային ջերմությանն այդքան կարոտ մեր հասարակության համար: ■

Հարցազրույց օրվա թեմայով

ՄՈՒՐԱՋ ԳՐԻԳՈՐՅԱՆ.

«Կատարենք միայն գիտակցված ընտրություն՝ հանուն մեր երկրի անվտանգության եւ առաջընթացի»

◄ 3

գոյություն ունի վարչական ռեսուրս ասվածը, որը սովորաբար ուղղորդվում է դեպի իշխանության թեկնածուն:

Դուք գոնե Կապան քաղաքի վարչական ռեսուրսը համարո՞ւմ եք Ձեզ աջակցող գործոն, թե՞ ոչ:

– Կապանի վարչական ռեսուրս ասվածն աշխատավոր կապանցին է՝ ներգրավված տարբեր պետական կառույցներում, եւ, իհարկե, չեմ կարող բացառել, որ այդ միջավայրից ինձ ընտրողներ կլինեն: Ավելին, ես ակնկալում եմ, որ կլինեն:

– Ձեր քարոզարշավի ընթացքում կաշխատեք միայն Կապանի՞ տարածաշրջանի ընտրողների հետ, թե՞ Վայոց ձորի ու Սյունիքի մյուս տարածաշրջանների ընտրողների հետ նույնպես:

– Բնականաբար առավելապես կաշխատեմ Կապանի տարածաշրջանի ընտրողների հետ, իսկ թիմային աշխատանքների պահանջի դեպքում կընդգրկվեմ նաեւ այլ ուղղություններում:

– Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարումը, որին անցնում ենք առաջիկա ընտրություններով, նոր եւ ավելի պատասխանատու դերակատարություն է վերապահում Ազգային ժողովին, Աժ պատգամավորին:

Դուք, ընտրվելու դեպքում, կկարողանա՞ք արժանապատվորեն կրել պատասխանատու այդ մանդատը:

– Այո՛:

– Ազգային ժողովի ո՞ր մշտական հանձնաժողովում եք տեսնում Ձեր պատգամավորական գործունեությունը:

– Կարծում եմ՝ կարող եմ ընդգրկված լինել տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում՝ ելնելով իմ աշխատանքային գործունեությունից եւ ունեցածս փորձից: Միաժամանակ պետք է նշեմ, որ նմանատիպ որոշումները կայացվում են թիմային քննարկումների արդյունքում:

– Ազգային ժողովի գլխավոր գործառույթներից առաջինը, անտարակույս, օրենսդրական գործունեությունն է, որին մասնակցելու համար պատգամավորն ունի բացառիկ իրավունք՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք:

Դուք կկարողանա՞ք օգտվել Ձեր այդ բացառիկ իրավունքից՝ օրենսդրական նախաձեռնության հնարավորությունից:

– Ազգային ժողովի օրենսդրական գործունեությունն առավելապես ձեւավորվում է նաեւ կառավարության կողմից ներկայացված օրենսդրական նախաձեռնություններից, սակայն դա չի կարող նվազեցնել առանձին պատգամավորների եւ պատգամավորների խմբերի կողմից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու սահմանադրական իրավունքը:

– Սյունիքը տարիներ շարունակ, կարելի է ասել, բախտ չի ունեցել Ազգային ժողովի պատգամավորի առումով:

Կուզենայինք Ձեր պատկերացումն իմանալ օրինակելի պատգամավորի, աշխատող պատգամավորի մասին:

Ի՞նչը հատկապես պետք է բնորոշ լինի Աժ պատգամավորին:

– Մինչ օրս Սյունիքից ընտրված պատգամավորների վերաբերյալ որակավորմանը համաձայն չեմ, ինչը, սակայն, չի խանգարի ինձ ընտրվելու դեպքում ունենալ Աժ պատգամավորի իմ ձեռագիրը: Կարծում եմ՝ Աժ պատգամավորին բնորոշ պետք է լինի գիտելիքի, կենսափորձի, աշխատասիրության եւ անձնական պատասխանատվության համադրումը՝ ի նպաստ օրենսդիր գործունեության:

– Լինել Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր՝ նշանակում է նախեւառաջ շատ լավ իմանալ Հայաստանի Հանրապետությունը:

Ի՞նչ եք կարծում՝ Ձեր երազած, պատկերացրած Հայաստանի եւ մերօրյա Հայաստանի միջեւ շա՞տ տարբերություն կա:

– Ես տեսնում եմ մերօրյա Հայաստանի ընթացքը դեպի իմ երազած Հայաստան: Այդ ընթացքը տեւական է լինելու: Վստահ եմ, ուղղությունը ճիշտ է:

– Կուզենայինք Ձեր տեսակետն իմանալ՝ որո՞նք են Հայաստանի Հանրապետության առջեւ ծառացած առավել սուր եւ հնարավորինս արագ լուծում պահանջող հիմնախնդիրները:

– Ըստ առաջնահերթությունների հիմնախնդիրները կդասակարգեմ հետեւալ կերպ. ընդգրկուն անվտանգության շարունակական ապահովում, սոցիալական բեռի թեթեւացում, հանրային գիտակցության մեջ ազգային բարիքի արդարացի բաշխման գաղափարի ամրապնդում, հայ մարդու կողմից աշխատանքով վաստակ ստեղծելու մասնակի կորսված գաղափարի վերականգնում:

– Իսկ Սյունիքում եւ հատկապես Կապանի տարածաշրջանում ի՞նչ հիմնախնդիրներ եք տեսնում եւ ինչպե՞ս եք պատկերացնում դրանց լուծումը:

– Վերը նշված խնդիրները հատկանշական են նաեւ Սյունիքի համար:

– Սյունիքյան հինգ խնդրի առնչությամբ կուզենայինք Ձեր դիրքորոշումն իմանալ. ա) բնապահպանական իրավիճակ, բ) լեռնային գյուղերի փրկություն, գ) պոչամբարների շուրջ ռիսկերի նվազեցում, դ) հանքարդյունաբերության հետագա զարգացում, ե) տնտեսության դիվերսիֆիկացում:

– Հարցին պատասխանեմ ըստ Ձեր առանձնացրած կետերի՝ ա) նշված ուղղությամբ կան անելիքներ պարտականությունների վերաձեւակերպման եւ հստակ բաշխման առումով, բ) լեռնային գյուղերի փրկության խնդիրը պետք է լուծվի տնտեսական համալիր ծրագրերի համատեքստում, գ) հնարավոր ռիսկերի դասակարգում եւ ռիսկերի նվազեցման համալիր գործողությունների շարունակական իրականացում, դ) կարեւորում եմ հանքարդյունաբերության դերը, որը մրցունակ է միջազգային շուկայում եւ ոչ միայն Սյունիքի, այլեւ ՀՀ տնտեսության զարգացման շարժիչ ուժն է, ե) գաղտնիք չէ, որ Սյունիքի մարզի տնտեսությունը հիմնականում ունի մեկ ուղղվածություն՝ լեռնահանքային արդյունաբերությունը: Տնտեսության միաճյուղ զարգացումն իր մեջ ռիսկեր է պարունակում: Կարծում եմ՝ անհրաժեշտ է խթանել նաեւ տնտեսության այն ճյուղերը, որոնք լեռնահանքային արդյունաբերությունից կախվածություն չունեն, եւ դրանով փորձել մեղմել առկա ռիսկերը, քանզի դիվերսիֆիկացումը տնտեսական անվտանգության գլխավոր բաղադրիչն է:

– Ի՞նչ հորդորով եւ կոչով կդիմեք ընտրողին՝ ապրիլի 2-ի քվեարկությունից առաջ:

– Կատարենք միայն գիտակցված ընտրություն՝ հանուն մեր երկրի անվտանգության եւ առաջընթացի:

Զրույցը՝

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 07.03.2017թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: